

ՏՄՍՆԵՐՈՐԻ ՏՍՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 բուր, կես տարվանը 6 բուր:  
Առանձին համարները 5 կոպեկով:  
Թիֆլիսում դրվում են միայն կաթնաղբյուրում մեջ:  
Կատարարացրացիք դիմում են ուղղակի  
Тифлиса. Редакция «Менка»

Խմորաբաժանը բաց է առաօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից)  
Յույստարտումին ընդունվում է ամեն լիզուով:  
Յույստարտումինների համար գնորում են  
խորանայն բուրն 2 կոպեկ:

### ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Առաջին քայլը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ, Նա-  
մակ Ս. Պետերբուրգից—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ, «Порядокъ» լրագրի թղթակցութիւնը:  
—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—  
ՖԵԼԻՍՏՆԵՐ:

### ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Մենք միշտ յայտնած ենք այն միտքը թէ թիւրքիայի հայ ազգաբնակիւթիւնը պէտք է աշխատի համերաշխ լինել ոչ թէ միայն այլակրօն հայերի հետ, բայց և Հայաստանի մէջ բնակվող այլ ցեղերի և ազգութիւնների հետ: Հայը Հայաստանում պէտք է վերջապէս հասկանայ որ թիւրքաց Հայաստանը մի ամբողջ երկիր է, որի մէջ բունակվող բոլոր ազգաբնակիւթիւնները բարոյապէս և տնտեսապէս պէտք է համերաշխ լինեն միմեանց մէջ: Թիւրքիայի հայը պէտք է վերջապէս յիշե որ բացի հայ լինելուց, նա հայաստանցի է և նոյնպէս հայաստանցի են այն բոլոր ազգերը, որոնք բնակվում են նրա հետ միասին նրա հայրենիքում: Եթէ հայը ճնշված է կառավարութենից, նոյնքան ճնշված են Հայաստանում ապրող ասորին, թիւրքը, եղիզին, յոյնը և այլն: Եթէ հայը հարստահարվում է քիւրդի ձեռքով, նոյնքան հարստահարվում է նոյն քիւրդի ձեռքով և թիւրքը: Եթէ քիւրդը աւազակ է և նրան պէտք է քա-

ղաքակրթել, — նրան անհրաժեշտ է քաղաքակրթել նոյնքան հայի օգտի համար, որքան և Հայաստանի միւս խաղաղ ազգաբնակիւթիւնների համար: Եթէ հայաստանցի հային անհրաժեշտ է ինքնավարութիւնը, այդ ինքնավարութիւնը նոյնքան անհրաժեշտ է և հայաստանցի միւս ազգութիւնների համար: Հայը Հայաստանում աւելի ընդունակ է, աւելի առաջադէմ է, աւելի քաղաքակրթ է քան թէ իր հայրենիքի միւս ազգերը: Հայի վրա դրված է բարոյական պարտաւորութիւնը իր հայրենիքում ապրող միւս ազգութիւններին քաղաքակրթել, նրանց առաջնորդել լուսաւորութեան և քաղաքակրթութեան ճանապարհի վրա: Եւր գործը հայը կարող է կատարել երկու ճանապարհով մինը դանդաղ ճանապարհով, ուսում տարածելով իր հետ խառն ապրող ազգութիւնների մէջ, նրանց իր դպրոցները ընդունելով, նրանց համար դպրոցներ հիմնելով, նրանց հայացնելով: Բայց դրա համար երկար տարիներ են հարկաւոր: Երկրորդ ճանապարհը աւելի կարճ է. հայը պէտք է ամեն հասարակական, կամ տնտեսական դէպքից օգուտ քաղի իր համերաշխութիւնը ցոյց տալու դէպի այն բոլոր ազգերը, որոնք բնակվում են իր հայրենիքում:

Մարդս այնպէս է ստեղծված, որ նրա համար նիւթական շահերը միշտ աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան թէ բարոյական և հոգեւոր ձգտումները: Մարդիկների միմեանց մէջ համերաշխութեան զգացմունքը ծրնվում է նախ և առաջ և զլխաւորապէս նիւթական հողի վրա, իսկ բարոյական համերաշխութեան գաղափարները միշտ աւելի ուշ են հասկացվում: Թիւրքը ապրում է, և գուցէ երկար կարող է ապրել, առանց գրագիտութեան, առանց ուսման, առանց դպրոցների, բայց առանց հացի նա չէ կարող ապրել: Հացի խնդրի, նիւթական խնդիրների, հարկերի վճարման, նիւթական հարստահարութեան, կեանքի թշուառութիւնների հողի վրա բոլոր հայաստանցիները միմեանց շատ շուտ և շատ լաւ կարող են հասկանալ, դրա համար հարկաւոր չէ երկար փիլիսոփայութիւն: Հարկաւոր է մի առաջնորդող ոյժ միայն, — և այդ առաջնորդող ոյժը Հայաստանի բոլոր ազգերի վերաբերութեամբ կարող է հայը լինել: Այլին, գայմազամը ճնշում է գաւառի զիւղական ազգաբնակիւթիւնը, քիւրդ աւազակը անպատիժ կողոպտում, հարստահարում է մի նահանգի ազգաբնակիւթիւնը, — եկէք միանանք, կարող է ասել հայը թիւրքին, բոլորս էլ միակերպ տանջվում ենք,

համերաշխ լինենք, միասին գործենք, խնդիրք տանք, աղերսագիր միասին ստորագրենք, գանդապենք, մենք մի երկրի մարդիկ ենք, մի հաց ենք ուտում, մի օդ ենք ծծում, մի տեղ ենք ծնվում, ապրում ու մեռնում, մի երկրի որդիներ ենք, բոլորս էլ եղբայրներ ենք: Եւ ահա սկսվում է համերաշխութիւն, սկսվում է հասկացողութիւն թէ բոլորն էլ մի հայրենիքի անդամներ են... Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը հաղորդում է որ նորերումս Ամսի նահանգի Մոկս գաւառի հայ և թիւրք ժողովուրդը միանալով մի հանրագիր ստորագրեցին և մատուցին թէ Ամսի կուսակալին և թէ հեռագրեցին այդ մասին Ներսէս պատրիարքին, Բ. Կրանը իրանց գանդատը հարստահարիչների դէմ հասցնելու համար: Եւ առաջին քայլը Հայաստանի ազգաբնակիւթեան հասարակական համերաշխութեան մի ցոյցի: Այս թեական, կենսական, տընտեսական հողի վրա ազգերը աւելի միմեանց կարող են մօտենալ, իրար հասկանալ, քան թէ ուսման, լուսաւորութեան հողի վրա: Թող այդ տեսակ դէպքերը կրկնվեն, թող հայերը միշտ ձեռք մեկնեն դէպի հայաստանցի միւս ազգերը ընդհանուր նեղու-

### ՖԵԼԻՍՏՆԵՐ

Իմ ֆելիստոններս — «Порядокъ» լրագիրը «Մշակի» մասին:— Ռուս հասարակութիւնը և հայոց մամուլը:— Կարճեալ թանաք:— Թիֆլիսի հայերը:— Հայոց ազգը և մայրենի լեզուն:— Փող և բարոյական իղէաշնորհ:— Ազգութիւն և կրօն:— Կրօնի գործնական կողմը:— Կոթիքի երկիւղը և քսան կօպէկանոց մոմ:— Յոյց և մօղա:— Հարեմական կանայք:— Վաճառականի դանգաճոր:— Երկու անցք:— Մոլեակները և տիկին Պալլադիկի:— Հայը ժլատ չէ:— Լրիցով և նաղրտական ժողովրդ:— Հայոց ժողովրդական լեզուն:— Մի հարց առանց պատասխանի:

Վաղուց է խոստացել էի ամիսը մի անգամ ֆելիստոններ գրել: Ս. Պետերբուրգում կամ Մոսկվայում կեանքը այնքան հարուստ է այլ և այլ հասարակական երևոյթներով, որ այնտեղ շարքով մի անգամ կարելի է ֆելիստոններ գրել: Իսկ մեզանում աւելի շուտ չէ կարելի գրել ֆելիստոններ, քան թէ ամիսը մի անգամ: Այս տարի ես մի ֆելիստոն գրեցի յունվար ամսին: Սա կը լինի երկրորդը, փետրվար ամսին: Արեւն այս տարի յոյս ունեմ թէ ինձ կաջողվի ամիսը մի անգամ ֆելիստոն գրել:

Ֆելիստոնը այնպիսի բան է, որ շատ անգամ մի օր և է միտք, ծանօթի մի ասած խօսք, լրագրում կարգացած մի քանի սոգեր՝ բաց են ա-

նում գրողի առջև ֆելիստոնի մի ամբողջ պրօգրամ: Այդպէս էլ եղաւ ինձ հետ այս անգամ: Բաց արի ուս «Порядокъ» լրագրի թերթը և կարգաչի կովկասեան հայոց լրագրութեան մասին առհասարակ և «Մշակի» մասին մասնաւորապէս հետեւալը:

«Ոչ մի հայոց լրագիր չը կայ, որ կարողանար իր եկամտով ծածկել իր ծախսերը, բոլորն էլ ունեն դէֆիցիտ և ապառիկներ բաժանորդների վրա: Ամենօրեայ «Մշակ» լրագիրը, մտնելով իր հրատարակութեան տասներորդ շրջանը, հանդիսաւոր կերպով յայտնել է որ վերջապէս այս տարի յոյս ունի ծածկել իր ծախսերը: Նա ունէր անցեալ տարի 1100 բաժանորդ, որ հայոց թերթի համար մի չեղած թիւ է համարվում: Կրանից կարելի է եղբարիակել ինչ նիւթական գրութեան մէջ են այն երկրորդական լրագիրները, որոնց բաժանորդների թիւը 150 մինչև 400 է: Բայց, մի և նոյն ժամանակ, նրանք բոլորն էլ շարունակում են կատարել իրանց յանձն առած պրօգրամը: Աշխատանքի ծանրութեան գրեթէ երկու երրորդականը դրված է խմբագիր հրատարակողի վրա: Ամեն օր գրել առաջնորդող յօդուածները, գրել ֆելիստոններ, բեպօրտելի պաշտօնը կատարել, մինչև լոյսը նստել տըպարանի մէջ (որ ի հարկէ սեփական տպարան չէ), սպասելով որ ցէնզորից ստացվի թոյլ տուած համարը, շատ անգամ նոյն իսկ տպարանում գրել յօդուածներ արգելվածների տեղ, ենթարկվել գաղատատանական սուղանքներին և այդ բոլորը

կատարել հասարակութեան պլան ու տ կ ա ն նորհակալութեան համար, — ահա հայոց լրագրի խմբագիր—հրատարակողի դրութիւնը: Աշխատանքից ներս ու թղթակիցները ծրն են աշխատում: Կարգաւոր այդ կտորը որ թէ և մի քանի աննշան անձնութիւններ ունի, բայց առհասարակ ճիշդ նկարագիր է հայոց լրագրի դրութեան, ևս մտածեցի: Գոնէ հայոց հասարակութիւնը ամաչկի, որ ամբողջ ուսուց հասարակութեանը յայտնի կը լինի թէ հայը ինչպէս է պահանջում իր մայրենի լեզուով հրատարակող թերթը: Եւ թող չը մոռանան հայերը որ այդ կտորը տպված է այնպիսի լրագրում, որ կարճ ժամանակում մեծ նշանակութիւն է ստացել արդէն ամբողջ Ռուսաստանում: Արեւն ամբողջ Ռուսաստանը կը կարգայ և լաւ կը ծիծաղի հայերի վրա, որոնք մեծ մեծ խօսում են, բայց շատ քիչ գործ են կատարում... Երեւի հայերը բաժանում են այն կարծիքը, որ ազգին թան աք ո վ օգնողն՝ օգնել պէտք չէ... Բայց ախտս որ «Порядокъ» լրագիրը չէ իմացել, որ 40 հազար հայ բնակիչ ունեցող Թիֆլիսում «Մշակը» ունի հազիւ և բ կ ու է ա բ իւ բ բաժանորդ: այդ իրողութիւնը մեզ, հայերին վրա, լաւ ծիծաղելու առիթ կը լինէր ուս հասարակութեան համար:

Բայց թողնենք հանաքը և ծանր խօսենք: Միթէ, ճշմարիտ, կարելի է յանկարծ ինքնաճա-

նաչութիւն պահանջել մի ազգից, որ դարեւրով ապրում էր և շատ լաւ էր գգում իրան առանց մայրենի լեզուի: Վրաստանի հայը վրացերէն էր խօսում, Երևանի ու Նախիջևանի հայը թուրքերէն, Մուշի և Բաղէշի հայը քորդերէն, Թաւրիզի հայը պարսկերէն... Հայը գործնական ժողովուրդ է: Հայերէնը, մայրենի լեզուն հ ա ց չէ տալիս, ուրեմն կարելի է այդ մայրենի լեզուն մոռանալ: Մայրենի լեզուն այն ժամանակ միայն զին կունենայ հայի համար, երբ գրանով կարելի կը լինի հարստանալ, փող վաստակել, ապրել: —Վրացերէն էլ խօսելով փոքս կուշտ է, աւտում է գործնական թիֆլիսցի հայը, էլ ինչին է պէտք ինձ հայերէնը: —Կրուտ նա աւում, եղբայր, պատասխանում է Հին-Նախիջևանի հայը, ես էլ հացի մէջ պակասութիւն չեմ գգում թուրքերէն (թաթաւրերէն) խօսելով: Արեւն ամեն բան փողի համար... Բարձր, ազնիւ, բարոյական մտքեր, իղէաշնորհ:— դարգակ բաներ են... Եթէ թիֆլիսցիին համարված լինէր, որ «Մշակի» իւրաքանչիւր յօդուածը կարգաւորց յետոյ, նա կարող է աւելի լաւ աջողեցնել իր պ օ գ բ ի ա դ ն եր ը, աւելի լաւ առուստուր անել, հարստանալ:—այն ժամանակ նա անպատճառ կը գրվէր «Մշակին»: Կամ եթէ խմբագիրը նըշանակութիւն ունեցող մի մարդ լինէր քաղաքում կամ երկրում, որից կարելի էր կախված

Թեան ժամանակ, — և շուտով  
Հայաստանի բոլոր մեացած ցե-  
ղերը իրանց համերաշխ կը զգան  
Հայերի բոլոր ձգտումների հետ:  
Այնչ այնքան չէ մտեցնում  
մարդկանց, որքան ընդհանուր  
զժբազդութիւնը: Իսկ այդ տե-  
սակ դրութիւնից, այն համակրա-  
կան, համերաշխ զգացմունքից  
որ կարող է ծնուիլ ընդհանուր  
զժբազդ դրութենից, պէտք է  
իմանալ օգուտ քաղել:

Եթէ Հայը, յիշելով էլ որ ին-  
քնն Հայ է, միշտ կը յիշի որ  
նա բացի սորանից հայաստ-  
տանցի է, կը յիշի որ Թիւրքը,  
բիւրդը, եղիդին, ասորին նոյնպէս  
Հայաստանցիներ են, եթէ նա  
նիւթական բոլոր հարցերի  
մէջ կրմանայ համերաշխութեան  
զգացմունք հաստատել իր հայ-  
րենիքում բնակվող բոլոր հայրե-  
նակիցների մէջ, ինչ կրծնին ու  
ցեղին և պատկանելին նրանք,  
բաւական է որ նրանք բոլորն էլ  
Հայաստանցի են, հայը այդ ճա-  
նապարհով աւելի շուտ կը վրձ-  
ուել տայ հայոց խնդիրը,  
քան թէ գանազան դիւանա-  
գիտական ճանապարհներով:

Թող Հայը չը մոռանայ որ  
ինքն Հայ է, բայց թող յիշի  
նոյնպէս որ նախ և առաջ նա  
հայաստանցի է և որ այն  
բոլոր ազգերը, որոնք բնակվում  
են Հայաստանում նոյնպէս հա-  
յաստանցի են: Թող նա  
հասկանցի այդ գաղափարը իր  
հայրենիքի բոլոր եղբայրներին  
գործնական ճանապարհով, նիւ-  
թական շահերի վրա հիմնվելով:

Թող Հայը Հայաստանը աւելի  
բարձր դասի, քան թէ հայու-  
թիւնը, և դրանով փրկված կը  
լինի և հայութիւնը: Թող չը մո-  
ռանայ որ Հայաստանի ամեն մի  
բնակիչ հայաստանցի է:

Ամեն տեղ Հայը իսկապէս կորցրել է իր ազ-  
գութեան վրա ճանաչութիւնը, կորցրել է ազ-  
գութիւնը: Արատանում նա լուսաւորչական կրօ-  
նի վրա ցի է, երեսնեան նահանգում նա լու-  
սաւորչական կրօնի թ ու ր ք է, և այն:

Հայը կորցնելով իր ազգութիւնը միայն հա-  
ւատարիմ է մնացել իր կրօնին: Բայց եթէ կար-  
ծում էք որ դա այն պատճառով հաւատարիմ  
է մնացել իր կրօնին, որ խոր կրօնական զգաց-  
մունք ու աստուածագալուցման ունի (երանի  
այսպէս լինել), շատ կը սխալվէք: Եթէ հայը  
հաւատարիմ է մնացել իր կրօնին, — դարձեալ մի  
անձնական, ետական հայրէ կայ այդ զգացմուն-  
քի մէջ: Կարելի է ամբողջ կեանքը խաբել,  
սուտ խօսել, իր նմաններին ծնել, հարստահարել,  
— բայց կիրակի օրը, եկեղեցի գնալով, մի քանի  
անգամ ծոնը դնելով ու խաչակնքելով կարելի  
է շահել Աստուծու սիրտը, որպէս զի մեռնե-  
լուց յետոյ դժոխք չընկնել:

Հայը աստուածագալուց է դարձեալ այն պատ-  
ճառով, որ գիտէ թէ Աստուածը ոյժ է, գիտէ  
որ ինքն նրանից կախումն ունի... միայն թէ դը-  
ժոխքն ուղարկի... Լաւ չէ բարկացնել ոյժ ու-  
նեցողներին...

Բայց եթէ մի օր հայը պատահամբ իմանար  
թէ Աստուածը այս կամ այն պատճառով, այսու-  
հետե նրաժարվել է մարդիկներին զժոխք ուղար-  
կելու իրաւունքից, — հայը այլ ևս երբէք չէր էլ  
գնայ եկեղեցի...

Հայը այն պատճառով աստուածագալուց չէ որ  
Աստուծու գիրքը կարդացել, ուսումնասիրել,  
հասկացել է, — ոչ, նա երբէք չէ էլ ուսումնա-  
սիրել այդ գրքի բովանդակութիւնը, — բայց այն  
պատճառով որ շատ յարմար է կեանքի մէջ ա-  
րած բոլոր կեղտոտութիւնները եկեղեցում քսան  
կօպէկանոց մոմ դնելով ծածկել...

Եւ նա աշխատում է քսան կօպէկանոց մոմն  
էլ, եթէ հնար է, տաս կօպէկով աւնել... Բանն  
չը կայ, մտածում է նա, Աստուած ի՞նչ չի իմա-  
նայ որ ես միայն տաս կօպէկ եմ վճարել, իսկ  
մոմի հաստութեան վրա նայելով, դարձեալ հա-  
ւատանքով կը լինի որ քսան կօպէկանոց է...:

Ամեն բան ց ո յ ց ի համար, ամեն բան մ ռ  
դ ա յ ի համար...  
Երբ որ «ГОЛОСЪ» լրագրում հայերին պատ-  
պան մի յօդուած է երևում, — մեր հայերը մի  
քանի օր շարունակ սկսում են հայերէն խօսել,  
մեր հայ ընտանիքների օրիորդները սկսում են  
հայոց լեզուի գրասեր աւնել... Այդ տեսում է

Եւ եթէ հայը կամենում է  
մինչև անգամ դիւանագիտական  
ճանապարհով գործել, թող պա-  
հանջի Թիւրքիայից և Եւրոպա-  
յից ինքնավարութիւն ոչ թէ  
հայերի համար միայն, այլ  
հայաստանի բոլոր ազգերի  
համար:

Գ. Ա.

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ

12-ին փետրվարի

Պետերբուրգում այժմ ժողոված են գրեթէ ու-  
սումնարանական բոլոր շրջանների հոգաբարձու-  
ները: Ազգային լուսաւորութեան նախարարի  
խորհրդի բոլոր անդամները մասնակցութեամբ և  
նախարարութեան կառավարչի, սաստու-սեկրե-  
տար Սարուբովի նախագահութեամբ նոքա այժմ  
սկսել են քննութեան ենթարկել գիմնադրանքի  
մանկավարժական խորհուրդների յայտարարու-  
թիւնները և հոգաբարձական խորհուրդների բեղու-  
մէն այն հարցի մասին թէ՛ ինչ միջոցներով կա-  
րելի կը լինի թեթևացնել գիմնադրական կուրսը  
աշակերտների համար:

Գիմնադրանքի մանկավարժական խորհուրդնե-  
րի կարծիքները շատ գանազան են: Աճառամասնու-  
թիւնը զայն է այն եզրակացութեան թէ՛ հար-  
կուոր է անշուշտ թեթևացնել աշակերտների  
տնային աշխատանքը և դրա համար առաջար-  
կում են հետեւեալ միջոցները. — 1) աշակերտաց  
տալ որքան կարելի է շատ հանգստութիւն, որ-  
պէս զի նոքա կարողանան պարսպել տանը ար-  
հեստներով և դրանով լրացնեն գիմնադրանքում  
ստացած կրթութիւնը: 2) հաւասարակշիւ պահ-  
պանել աշակերտաց տնային պարապմունքը: 3)  
անդադար օգնել թոյլ աշակերտներին և 4) դա-  
սական պարապմունքները հիմնել կանոնաւոր  
սկզբունքների վրա:

Մանկավարժական խորհուրդները մի և նոյն  
ժամանակ յայտնում են իրանց կարծիքը սակելով,  
թէ՛ այդ բոլոր միջոցները միայն ժամանակաւոր  
քննադրութիւն ունեն և թէ նոցա գործադրու-  
թիւնը չէ կարող շօշափելի կերպով թեթևացնել  
աշակերտաց դրութիւնը: Աշակերտաց աշխա-  
տանքը իսկապէս թեթևացնելու համար, մեծա-  
մասնութեան կարծիքով, կարեւոր կը համարվէր  
հիմնաւոր քննութեան ենթարկել զպրօցական  
պրօգրամները և քննութեանց համար սահմա-  
նադրած կանոնները: Կարողական պրօգրամնե-  
րը պիտի կրճատուին բովանդակութեամբ  
բոլոր առարկաներից, իսկ դոցանից մի քա-  
նիսը պէտք է ուրիշ տեսակ կարգադրվեն դա-

մի երկու շաբաթ... Յետոյ ամեն բան դարձեալ  
մոռացվում է, հայերը սկսում են միմեանց մէջ  
դարձեալ օտար լեզուով խօսել, հայ օրիորդները  
արձակում են իրանց վարժապետներին...

Գրում էք մի յօդուած, որի մէջ յայտնում էք  
թէ թիֆլիսցի հայ կիրն հարեւաւոր կ'ըլլա  
է, թէ նա մտաւոր կեանքից բոլորովին դուրի է  
սպորում, որ և կազմում է զլիւսաւոր յատկանիշը  
հարեմական կանանց, բացառում էք թէ դրա  
մէջ չէ ազատութիւնը, որ կիրն զարգակ զար-  
դակ խօսի ամեն հարցի վրա, առաւօտից մինչև  
գիշերը փողոցներում չըլի, մօղային խանութ-  
ները յաճախի և այլն...:

Իսկոյն, այդ թաւմ տպաւորութեան տակ,  
թիֆլիսի մի քանի կանայք հաւաքվում են, մի  
որ և է ընկերութիւն են հիմնում, որ ցոյց տան  
թէ միմիայն անասնական և հարեմական կեան-  
քով չեն սպորում, այլ և մտաւոր կեանքով,  
ուրեմն հարեմական կանայք չեն... Բայց զը-  
քաղութիւնն այն է, որ այդ նոր հիմնած ընկե-  
րութեանն գոյութիւնը տեսում է շատ շատ մի  
երկու օր...:

Ամեն բան ց ո յ ց ի համար, ամեն բան մ ռ  
դ ա յ ի համար...  
Ամեն բան ց ո յ ց ի համար,  
— Ախար, միշտ մեղադրում էք մեզ, ասում  
էր ինձ նորերումս մի հայ վաճառական, հան-  
դիպելով ինձ, ախար քանդակցանք, դրուտ որ  
քանդակցանք...  
— Ինչպէս քանդակցանք, և ինչ մեղադրանքի

սասանց վրա, որպէս զի պրօգրամներից  
դուրս ձգվի այն ամենը, ինչ որ չէ նպաս-  
տում աշակերտաց կանոնաւոր դարգացմանը մը-  
տաւորական կողմին, այլ միայն թեթևացնում է  
նոցա միտքը, Գիմնադրանքից մի քանիսը ցոյց  
են տալիս թէ՛ աշակերտաց դժուարութիւնները  
և արգիլքները, որոնք ազգեցութիւն ունեն և  
նոցա տարեկան պարապմանց վրա, զլիւսաւորա-  
պէս կախումն ունեն հարցաքննութեանց սիս-  
տեմայից և թուանշանների պարտաւորական լի-  
նելուց:

Աստուծոյ մասին շրջանների հոգաբարձուաց  
ժողովի առաջին նիստում քննվել են այն բոլոր  
հանրա-դիպակտիքական ու մանկավարժական մի-  
ջոցները, որոնցով յոյս կայ թիթևացնել աշա-  
կերտաց տնային պարապմունքները:

Գիմնադրանքի մանկավարժական խորհուրդ-  
ները առաջարկում են մի ամբողջ շարք այդ տե-  
սակ միջոցների: Գոյց տանք դոցանից նշանա-  
ւորները. 1) իւրաքանչիւր քառօրդ տարուայ  
վերջում կամ տարուայ վերջում ընդհանուր ըն-  
դիպակտիքներ կազմել: 2) դասերը այնպէս կար-  
գաւորել, որ իւրաքանչիւր օր դոքս շուրից ա-  
ւելի չը լինեն: 3) տնային բոլոր դասերի նա-  
խապարտաստութեան համար ժամ ու կէսից ա-  
ւելի չը նշանակվի: 4) ամառուան արձակուրդ-  
ների համար սուած պարապմունքները վերցնել  
և 5) ամառուան արձակուրդների ժամանակը ա-  
ւելցնել:

Հին լեզուներից ենթադրվում է վերցնել կամ  
գոնէ մեծ մասով սահմանափակել քերականա-  
կան կանոնների համար օրինակների, նոյնպէս և  
լատինական և յունական ոտանաւորների պար-  
տաւորական անգիր սերտողութիւնը, քերական-  
ութեան դասագիրքը ամբողջ ուսման տարուայ  
ընթացքում չը փոխել, վերցնել բոլոր տնային  
գրաւոր աշխատանքները հին լեզուներից բոլոր  
դասաւորներում և բաւականանալ միայն դասա-  
կան կրթութիւններով:

Ուշադրութիւն է դարձրած նոյնպէս և այդ  
դասագրքերի վրա, որոնք գործադրվում են այժմ  
գպրօցներում և որոնք աչքի են ընկնում թէ՛ ի-  
րանց ընդարձակութեամբ, անթիւ երկրորդական  
և շուտով զլիւսաւոր միտքը խանգարող մանրա-  
մասնութիւններով ու չեն յարմարեցրած ինչպէս  
երկխոսյոց հասակի ու զարգացմանը, նոյնպէս և  
այն ուսման ժամանակի տեղութեանը, որ նը-  
շանակված է այս և այն կուրսը անցնելու հա-  
մար, ուստի և առաջարկվում է նոր ու լաւ դա-  
սագրքեր մշակելու համար հոգալ և այդ նպաս-  
տակի համար կօնկուրս նշանակել:

Հոգաբարձական ժողովի երկրորդ նիստում  
ենթարկվել են քննութեան մանկավարժական  
ժողովների ենթադրած մի քանի փոփոխութիւն-  
ները պրօգրամների մէջ: մի և նոյն ժամանակ  
ուշադրութիւն է դարձնում III ու IV դասա-  
տանց պրօգրամների վրա, ըստ որում այդ  
դասատանց աշակերտները համաձայն իրանց ֆի-

զիքական դրութեան պահանջում են մի առան-  
ձին ինամբ ու հոգաւորութիւն: Իրանց սա-  
րիքներով նոքա սպորում են տղայական և երի-  
տասարդական հասակի շրջանի մէջ, մի և նոյն  
ժամանակ նոցա ֆիզիքական ու բարոյական  
շրջանում նշուարվում է մի յանկարծակի փոփո-  
խութիւն, որը և ցոյանում է մի առ ժամանակ  
նոցա ընդունակութեանց մէջ: Ի նկատի աւնե-  
լով այդ բոլոր պատճառները առաջարկվում է  
որքան կարելի է քաղցրութեամբ ու մարդասի-  
րութեամբ վարվել IV դասատան աշակերտաց  
հետ, ինչպէս կուրսի ժամանակ, նոյնպէս և հար-  
ցաքննութեանց ժամանակ:

Իւրաքանչիւր առարկայի վերաբերմամբ մաս-  
նաւորապէս մենք կանց աւնենք հին լեզուների  
ենթադրած կրճատմանց վրա. 1) քերականու-  
թիւնը անցնելու ժամանակ պիտի բաւականա-  
նալ նրանով, ինչ որ կազմում է նրա ամենա-  
զլիւսաւոր մասը — չը ծանրարեւենել աշակերտաց  
միտքը զանազան բացառութիւններով և երկրոր-  
դական մանրամասնութիւններով: 2) կարճացնել  
հին հեղինակների թիւը թարգմանութեանց հա-  
մար: 3) կարճացնել այն զուգանքի և ոտանա-  
ւորների թիւը, որոնք ընթերցանութեան համար  
պարտաւորեցուցիչ են համարվում: 4) յունական  
լեզուի ուսումը պարտաւորական չտանել: 5)  
բաց թողնել յունական լեզուն գիմնադրական  
կուրսի առարկաների թուից և թոյլ տալ այդ  
երկու լեզուները միայն համալսարանական քա-  
ղաքներում, երկու հին լեզուների ուսումը վեր-  
ջին չորս դասաւորներում պարտաւորական չտա-  
նել նոցա համար, որոնք համալսարան մտնելու  
դիտաւորութիւն չունեն: 7) լատինական լեզուի  
դասաւորութիւնը սկսել երկրորդ դասատանից և  
8) յունական լեզուի դասաւորութիւնը սկսել չո-  
րրորդ դասատանից:

Բայց թէ ինչ եզրակացութեան եկան հոգաբար-  
ձական ժողովի առաջին երկու նիստերը — դեռ  
յայտնի չէ պարզապէս. բայց լսել ենք որ թուանը-  
չանքների սխառման քննութեան է ենթարկված,  
բերանացի քննութիւնները չորրորդ դասատան  
աշակերտների համար բաց են թողնվում և առ-  
հասարակ մեծ նշանակութիւն են տալիս գրաւոր  
քննութեանց: Կլասիքական լեզուների պրօ-  
գրամայի փոփոխութիւնների համար նշանակած  
քննութիւնը, սաստիկ վիճաբանութիւններից յե-  
տոյ, թողած է առաջիկայ նիստերին:

Ա. Կալաւեանց

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՎԹԱԿՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլիսի „Порядокъ“ լրագրին գրում  
են հետեւեալը փետրվարի 3-ից 07-ից նշա-  
նաւոր խնդիրը անգլիական ղեկավար պ. Գօ-  
շենի Կ. Պօլիս հասնելն է, որտեղ սպասում

մասին էք խօսում, հարցրի ես հատաբերու-  
թեամբ:

— Բաս ինչ է, եթէ մեղադրանք չէ, ինչ որ  
ձեր խմբագիրը միշտ մեր մասին գրում է իր գա-  
ղէտում. հայերը ժլատ են, հայերը ազգին չեն  
օգնում, ասում է... Չենք օգնում, բաս ինչ ենք  
անում: Այսօր թատրօնն է, վաղը «Արեւիկայ»  
ընկերութիւնն է, մէկէլ օր «Բարեգործական»  
ընկերութիւնն է, այստեղ «սովելուց» մասնա-  
ժողովն է, այնտեղ ակցիայով զագէտ հրատար-  
ակելն է. այդ բոլոր ձեռնարկութիւններին դար-  
ձեալ ու միջին է գնում փողը, եթէ ոչ մեզանից...  
արի ու այդ բոլոր ծախսերին դիմացիր...:

Ես պարոնին ոչինչ չը պատասխանեցի, իսկ  
ձեզ ընթերցող, կը պատմեմ երկու անցքերի մա-  
սին, — դուք ինքներդ, ինչպէս ուզենաք համե-  
մտոնեցէք:

Կ. Պօլիսի ներքէս պատրիարքը ուղարկում է  
նամակներ թիֆլիսցիներին, հրաւիրելով նրանց  
օգնել Հայաստանի սովեալ եղբայրներին:

Թիֆլիսի առաջնորդարանում հաւաքվում են  
հարուստ հայերը:

Միմեանց յորդորելով, միմեանց ամաչեցնելով  
թուրով, մրով, — վերջապէս ժողովում են 10,000  
րուբլ, հայ սովեալներին օգնելու համար:

Մի քանի ժամանակից յետոյ ուսուց օպերայի  
երգչուհի տիկին Պավլովսկու քէնեֆիան է լինում...  
Մի գիշերվայ մէջ նոյն թիֆլիսցի հայերը ստալիս  
են ուսու երգչուհուն 10,000 րուբլու ընծաներ...  
Եւ չը պէտք է մոռանալ որ տիկին Պավլովսկի